թողեալ զսալեզեանն, տպագրեցուցից զսաղմոսն առ ի սպառել զթուղթն անպիտան։ Վասն որոյ խնդրի ի Հայրութենէ քումմէ խոնարհաբար, զի եթէ ունիցի այս առաջադրութիւն զվնաս իմն՝ թէ հեռապէս և թէ մերձապէս քոյոյ Ցարգելութեանդ՝ ծանուսցես մեզ վռազիւ[1], զի ի բաց հրաժարեցայց. իսկ եթէ չունիցի այսպիսի ինչ, ներեսցես մեզ առ ի ձեռնամուխ լինել. լինելով քո ողջ յաւէտագունիւ մաքրութեամբ ի պարծանս ստորև գրեցելոյ

Նուաստութեանս

Սարգիս Աղք Եպսկպս. Կես.

Ցամի տեառն 1748
ՅԱպրիլի 1 [Վենետիկ]

ՃԽԲ.

Գերյարգելոյ Տեառն Տեառն Մխիթարայ Աբբայի վերատին Ողջոյն ընծայի հանդերձ յարգուբեամբ

Ընկալեալ իմ զգիր Վսեմութեանդ՝ և ծանեայ զկրկնակի փաստն բացաստութեանդ առ ի տպագրել զսաղմոսն։ Եւ մանաւանդ զյետինն փաստից, որ և դիտէր առ ի չլինիլն իմ հարկաւորապէս մեղադրելի։ Զոր ոչ գիտացի ոյր աղագաւ և յոր վայր լինիլ այս։ Քանզի եթէ վարկանիցի լինիլ այս ի կոստանդնուպոլիս, այսպիսի վարկանումս է ի դերևս։ Որովհետև զոյ նարդեանս անդ Դ տպագրատուն, որոց իւրաքանչիւրքն համայնագամայն տպագրեն հազարաւոր թուով զսաղմոսս թարց մեղադիրք լինելոյ իրերաց։ Եւ բաց յայսմանէ, նաև մինչ ընկալնուն զ իքէն յաճախապէս տպագրեցեալսն, բնաւ երբէք ոչ են զտրտունջ ինչ արարեալ զքէն, այլ գրեթէ չնորհակալք լինին յաւէտ։ Ուստի վարկեմ թէ և ըստ չափու արժողութեան՝ և զմեր տպագրեցելոյն լինիցէին չնորհակալք, և ոչ թէ մեղադիրք։ Բայց զուցէ՝ աստանօր իցեն այնք մեղադրողք, այդ է բան այլ իմն հաշուոյ։ Ցաղագս որոյ որպէս յարգելութիւն քո անխայեցեր զիս առ ի չլինիլ մեղադրելի։ Հանգունապէս հարկաւորիմ և ես առ ի ծանուցանել Տեառնդ զփաստն իմ, յորմէ ստիպեցայ առ այս առաջադրութիւն, առ ի անմեղադրելի պահել զպատիւն մաքրազանութեանդ։ Քանզի անձն ոմն յերևելեաց գրեալ էր ինձ ի Պոլսոյն մեծէ առ ի տպագրել վասն իւր զսաղմոսս, և ես ոչ մտաբերելով երբէք (թէ և պարտ իցէր) առ ի հարցանել Տեառնդ, թէ ունիցէ՞ր արդեօք այս գործ զվնաս իմն Հայրութեանդ, այլ միայն դիտելով առ այս՝ թէ այս է դիպուկ առիթ իմն վասն սպառելոյ զխափանեցեալ թուղթս իմ, գրեցի առ այն անձն՝ թէ ըստ ամենայնի յօժար եմ առ ի ծառայել, և աստուծով մերձ ընդ մերձ սկսանիմ ի տպագրել, որոյ վասն և պատրաստեցի զոմանս պիտոյս որքան առ տպագրութիւնն։

Ուստի եթէ այժմ դարձուցեալ զբանս իմ գրեցից առ այն անձն, թէ արգելումն եղև գործոյն՝ այս ինչ և այն ինչ պատճառաւ, զուցէ թէ և նոքա չփութեցեալք յայսմանէ, կամիցին ընդ մեղադրանօք արկանել զՊայծառ անունն Գերայարգելութեան քո, վարկելով յինքեանս թիւրապէս՝ թէ սակս մարմնական շահու իցէ այս լեալ։ Ուստի ծանուցանելով զայս դիպուած քոյոյ Հայրութեանդ, խնդրեմ անբասիրս առնել զմեզ այսմ մասին, զի ես ոչ եմ եղեալ աստ առ ի տպագրել զսաղմոսս և զժամագիրքս։ Վասն որոյ այս այսպէս ծանուցեալ գոլով, վերստին սպասեմք պատասխանւոյ Հայրութեանդ, պահելով ի մեզ ըստ ամենայնի զյարգումն և զհամարումն քոյդ երջանկութեան, որ և յաւէտ պայծառասցիս երջանկութեամբ ի պարծանս Ազգի մերոյ, և ինձ իսկ գլխովին

Որ եմ նուաստագոյն Ծառայ Տեառն

Սարգիս Աղք Եպսկպս. Կես.

Ցամի Տեառն 1748
ՅԱպրիլի 3 [Վենետիկ]

---

1. Փութով.